

Ինքնուրույն ՄԱՄՎԵԼՅԱԼ

Բաևասիրական գիրությունների թեկնածու

ՐԱՖՖՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՏԱՐԸՆԹԱՑԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, 1878 թվականի հունվարի կեսերին փաստական առումով ավարտվում է Ռուս-թուրքական պատերազմը և նույն թվականի փետրվարի 19-ին կնքվում է Սան Ստեֆանոյի դաշնագիրը: Հայտնի է նաև, որ այդ դաշնագրի մի քանի տողից բաղկացած 116-րդ հոդվածը ամբողջովին նվիրված էր Հայաստանին վերաբերվող բարենորոգումներին:

Դաշնագրի կնքումից չանցած մեկ ամիս, «Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունին գերմանական «Allgemeine Zeitung» լրագրից թարգմանաբար «Մշակ» լրագրի մարտի 10-ի համարում իր ընթերցողներին է ներկայացնում 16-րդ հոդվածի այն հատվածը, ուր ասվում էր, որ «Հայաստանը ստանալու է վերանորոգումներ համեմատ տեղական պահանջների և Օսման տրվելու է ապահովություն քողերի և չերքեզների դեմ»¹: Կրկին անգամ մեջ բերելով «համեմատ տեղական պահանջների» դարձվածքը, Գ. Արծրունին հետևեցնում է, թե «տեղական բառը պարզ ցույց է տալիս, որ Հայաստանը ունենալու է նահանգական ինքնավարություն»: Առաջ գնալով Արծրունին հուշում է արևմտահայությանը պահանջել ո՛չ միայն «քրիստոնյա նահանգապետ, քաղաքային և գյուղական վարչություններով», այլև «տեղական կամ խառը դատարաններ... քրիստոնյաների և մահմեդականների հավասարություն, ուսումնարանների ազատություն»² և այլն:

Գ. Արծրունին խորհուրդ է տալիս Ազգային ժողովին՝ թողնել Կ. Պոլիսը, տեղափոխվել Վան կամ Էրզրում և դառնալ «Հայաստանի տեղական նահանգական ինքնավարության գլխավոր կենտրոնական վարչություն»: Թեև միամիտ ու անհրապակ էին Արծրունու ցանկությունները, սակայն ազնիվ ու սրտաբուխ էր այն ոգևորությունն ու աշխույժը, որն այդ շրջանում տիրապետում էր ինչպես Արծրունու, այնպես էլ հայ մտավորականության մեծագույն մասի մոտ: Ըստ էության ոչինչ չատող, բայց գունազարդված դիվանագիտական խոստումները մի կողմից, բալկանյան ժողովուրդներին շնորհված անկախությունն ու ինքնավարությունը մյուս կողմից ամենուրեք մի նոր թափ են հաղորդում հայության ազգային-ազատագրական գաղափարախոսության հասունացմանն ու վերելքին:

Այդ օրերին հայ մտավորականության մեծագույն զանգվածը գտնվում էր այդ թեմայի հարուցած զինվածության մեջ: Կ. Պոլսում մարդիկ շնորհավորում էին միմյանց Հայաստանին տրվելիք վարչական ինքնավարության առիթով:

Ոգևորությունը մեծ հորձանք էր տվել...

Այս դեպքերից կարճ ժամանակ անց Րաֆֆին «Մշակ»-ի 1878 թվականի մարտի 16-ի

¹ Տնւ, «Մշակ», 1878, 10 մարտի, No 37:

² Նույն տեղում:

համարում տպագրում է «Դեռևս ուշ չէ» խոսուն վերնագրով հոդվածը:

Ի հակադրություն Գ. Արծրունու, որը «Մշակ»-ի միջոցով ազդարարում էր, թե «Հայերի ճակատագիրը վերջնականապես կարգավորված է», Բաֆֆու համար պարզ էր, կամ, ինչ-պես ինքն էր ասում «գործերից երևում էր», որ Սան Ստեֆանոյի դաշնագրությունից հետո պես ինքն էր ասում «գործերից երևում էր», որ Սան Ստեֆանոյի դաշնագրությունից հետո պես ինքն էր ասում «գործերից երևում էր», որ Սան Ստեֆանոյի դաշնագրությունից հետո պես ինքն էր ասում «գործերից երևում էր»:

Որոշակիորեն նկատելի է, որ Բաֆֆին պատերազմից հայ ժողովրդի ստացած օգուտը համարում էր մասնակի երևույթ և շատ էլ գոհ չէր արդյունքից: Նրա ըմբռնմամբ հայ ժողովուրդը մի շարք պատճառների հետևանքով չէր կարողացել օգտվել պատերազմի ընձեռնած պատեհ առիթից Թուրքիայի լծից ազատվելու համար: Այդ անպատեհության հիմնական պատճառը Բաֆֆին տեսնում էր «հայերի անշարժության մեջ... Ոչ ոք պարտական չէ հայերի համար մտածել, - գրում է նա, - քանի որ իրանք հայերը անշարժ մնացին (ընդգծումն իմն է - խ. Ս.) և իրենց համար չմտածեցին»:

Մատնանշելով ազատություն ձեռք բերելու երկու հնարավոր ուղի՝ Բաֆֆին իր այս «Դեռևս ուշ չէ» վերնագրով հոդվածի մեջ գտնում է, որ արևմտահայերը կա՛մ պետք է պլանական ժողովուրդների օրինակով զենք վերցնեին և «կա՛մ գրավոր կերպով իրենց բողոքը հայտնեին՝ ուր որ հարկն է: Առաջին գործողության մեջ նրանք անընդունակ էին, իսկ երկրորդը՝ ոչ ոք նրանց չէր արգելում»: Առաջին դեպքում, «ազատության զգացումը արմատից է ծագում, ամբոխի սրտից է բխում, ցածից դեպի վեր է բարձրանում»:

Իսկ երբ ժողովուրդը զարգացած չէ, գտնվում է մի այնպիսի հիվանդոտ դրության մեջ, որ միայն զգում է իր ցավերը, բայց դարման անելու շնորհից չունի, այն ժամանակ նրան իր թշվառ վիճակից ազատելու հոգը վերևից դեպի ցած է իջնում (ընդգծումը՝ խ. Ս.): Դա հայտնվում է բարձր կենտրոններում, մայրաքաղաքներում, ուր որ գտնվում են ժողովրդի ավելի զարգացած և գործունյա դասերը: Ամբոխը եմթարկվում է այդ տարրերին և կրավորական դեր կատարում:

Առաջին միջոցը արմատական է, իսկ վերջինը՝ ներգործական»³:

Բաֆֆին ազատություն ձեռք բերելու հարցում միշտ էլ առաջնությունը տվել է արմատական միջոցին, երբ ազատությունը ներքևից է դեպի վեր բարձրանում, սակայն երբ նա գրում էր «Դեռևս ուշ չէ» հոդվածը, արդեն պարզ էր, որ արևմտահայությունը չէր կարողացել դիմել արմատական միջոցին, ձեռքից բաց էր թողել պատերազմական վիճակից օգտվելու պատեհությունը: Չէր կարողացել հետևել բալկանյան ժողովուրդների օրինակին, ուստի և չէր արժանացել անկախություն ստանալու բախտին:

Ահա այս պատճառով էլ Բաֆֆին իր «Դեռևս ուշ չէ» հոդվածում, ելնելով Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածի թելադրանքով ստեղծված իրավիճակից այս դեպքում, իր ողջ գործունեության ընթացքում միայն այս անգամ իր անխապատվությունը տալիս է վերևից եկող ազատությանը և քննարկման առարկա է դարձնում ներգործական միջոցին դիմելու և այդ հնարավորությունից օգտվելու անհրաժեշտությունը:

³ Բաֆֆի, Երկնի ժողովածու, հ. XI, Ե., 1991, էջ 37-39:

Ըստ Րաֆֆու կողմից այս հողվածում զարգացրած տեսակետի՝ մերգործական միջոցով ժողովրդի կարիքները, նրանց իղձերն ու ձայնը աշխարհի առաջ կազմվում ու լսելի են դարձնվում «բարձր կենտրոններում՝ մայրաքաղաքներում, ուր գտնվում են ժողովրդի ավելի զարգացած ու գործունյա դասերը»⁴: Էնց այս մկատառումով էլ Րաֆֆին իր հողվածում քննարկման առարկա է դարձնում հայ հասարակական կյանքում գոյություն ունեցող «զարգացած ու գործունյա դասերի» որպիսությունը, որոնք պետք է հանձն առնեին ժողովրդի իղձերի իրականացման խնդիրը, վերևից եկող ազատության պայմաններում: Բազմակողմանիորեն վերլուծելով յուրաքանչյուր «կուսակցության սոցիալ-տնտեսական շահագրգռվածությունն ու հենարանը» և պարզելով դրանց քաղաքական դիրքորոշումը, Րաֆֆին տեսնում է, որ պոլսահայ «խոշոր բուրժուազիան, ամիրայությունը ամուր թելերով կապված են վերնախավի հետ և նրանց շահը թելադրում է միշտ կանգուն տեսնել Թուրքիային իր կառավարության անկարգ այլանդակության մեջ»⁵:

Ելնելով տազմապ հարուցող վիճակից՝ Րաֆֆին կոչ է անում օգտվել միակ հնարավոր միջոցից, պահանջել վարչական ինքնավարություն և գտնում ու ընդգծում է, որ խնդրին մասն լուծում տալու համար «Դեռևս ուշ չէ»:

Րաֆֆու այս հողվածից կարճ ժամանակ անց, դիվանագիտական խաղերի արդյունքում, անգլիական ու թուրքական կառավարողների կողմից մտրից է ասպարեզ մետվում Հայաստանի ինքնավարության գաղափարը: Կ. Պոլսի Պատրիարք Ներսես Վարժապետյանը, Ազգային ժողովից կորզելով Հայաստանի համար վարչական ինքնավարություն պահանջելու իրավունք, հապճեպորեն ստեղծում է պատվիրակության երկու խումբ: Խորեն Գալֆայանը (Նար-Պել) և Իզմիրյանը մեկնում են Ռուսաստան, իսկ Մկրտիչ Խրիմյանի գլխավորած պատվիրակությունը ուղևորվում է Եվրոպա՝ Հայաստանի վարչական ինքնավարության ծրագիրը Բեռլինի կոնգրեսին ներկայացնելու համար:

Ոգևորությունը մեծ հորձանք էր տվել, որպես ինքնավարության կառավարիչ-մահանգապետ առաջ են քաշում Ստ. Ասլանյանի, Լորիս-Մելիքովի, Մելքոն Խանի, Նուբար Փաշայի և այլոց թեկնածությունները:

Րաֆֆին հասարակական կյանքում տեղի ունեցած այս դեպքերին արձագանքելու նպատակով ձեռք է առնում «Խաչագողի հիշատակարան» վեպի նախնական տարբերակի ձեռագիրը, անջատում և առանձնացնում է Արևմտյան Հայաստանում կատարվող գործողություններին վերաբերվող դրվագները և լրացման ու ծավալման միջոցով ընթացք տալիս «Կայծեր» վեպի գրությանը:

Ձեռնարկելով «Կայծեր»-ի գրությունը, հասկանալի է, որ Րաֆֆին այդ վեպի մեջ պետք է ներմուծեր այնպիսի գործողություններ, որոնք վիպականորեն պայմանավորում ու տրամաբանական էին դարձնում Արևմտյան Հայաստանի համար տվյալ ժամանակաշրջանում ստեղծված ու տիրապետող դարձած կացության արձագանքները: Որքան էլ թվացյալ լիներ, անհրակական ու վաղանցուկ վարչական ինքնավարություն ստանալու հույսերը, միևնույն է, Րաֆֆին չէր կարող հեռու մնալ ժամանակի առաջադրած խնդիրներից: Ինչպես փաստարկվում է, «Կայծեր»-ի այդ տարբերակից մեզ հասած «Կայծերի վերջը»

⁴ Նույն տեղում:
⁵ Նույն տեղում, էջ 43:

խորագրով էպիլոգի (վերջերգի) միջոցով Բաֆֆին անտարբեր չի եղել այն գեղեցիկ հույ-
սերի ու օղեղեն ամրոցների հանդեպ, որ տիրապետում էր Թուրքիայի լծից ազատվել
ցանկացող ժողովրդի մեջ Սան Ստեֆանոյից մինչև Բեռլինի դաշնագիրն ընկած հարյուր
երեսունմեկ օր տևող ժամանակամիջոցի ընթացքում:

Ինչպես գրում է Օիրվանգադեն, «Բաֆֆին այն ժամանակ էր ավելի ջերմ փափագ
զգում իր գաղափարներով ասպարեզ գալու, երբ հասարակական միտքը քնած չէր... Առ-
հասարակ հասարակության տրամադրությունը մեծ ներգործություն ուներ Բաֆֆու վրա...
Ինքը խնդիրներ չէր հորինում, այլ միշտ ձգտում էր հրապարակի վրա նոր զարթնած և
մտքեր հուզող խնդիրներին լուծում տալ... Նրա գլխում առաջին տեղը ամուր բռնած էր լի-
նում այդ տեմերնոցիան, որը պետք է այդպես թե այնպես անցներ վեպի մեջ»⁶:

Այն պարագայում, երբ հայության մեջ լայն տարածում ուներ և տարփողվում էր վար-
չական ինքնավարության գաղափարը, բնավ էլ անտրամաբանական չէր, որ հենց այդ
օրերին էլ Բաֆֆին ձեռնամուխ է լինում «Կայծեր»-ի գրությամբ: Խոսքը վերաբերվում է
վեպի նախնական տարբերակին, որի բնագիրը մեզ չի հասել և որի անմիջական շարու-
նակությունը՝ կցորդն է եղել Բաֆֆիագիտությանը հայտնի «Կայծերի վերջը»:

Հայության վերը ներկայացված տրամադրություններն ու ակնկալիքները, կարելի է
ասել, որոշակի դեր են կատարել այդ նույն ժամանակաշրջանում գրված «Կայծեր» վեպի
բովանդակության կազմավորման գործում: Սակայն քանի որ մեզ չի հասել «Կայծեր»-ի
այդ տարբերակի ձեռագիրը, այս վարկածը մնում է որպես տրամաբանական ենթադրու-
թյուն, թեև այդ տարբերակի կցորդը հանդիսացող «Կայծերի վերջը» վերնագրով էպիլոգը
որոշակի հիմքեր է տալիս այդ վարկածը հիմնավորված համարելու համար:

Հայտնի է, որ Աննա Բաֆֆին, ամուսնու ձեռագրերի մեջ հայտնաբերելով Բաֆֆու այդ
շրջանում գրած «Կայծերի վերջը», 1890 թվականին այն հրատարակում է Թիֆլիսում:

Այստեղ պայծառ գույներով է ներկայացված Հայաստան աշխարհը, հայ շինականի
խաղաղ հունի մեջ մտած և արդյունավետ աշխատանքով արգասավորված բարեկեցիկ
կյանքը: Ռևազմիսան գյուղում իշխանական ամրոցի փլատակների դիմաց «Կայծեր» վեպի
գլխավոր կերպարներից մեկը՝ Կարոն, կտուցել է իր քարաշեն տունը և կազմել մի համե-
րաշխ ընտանիք: Արյան հետ խաղացող մարդը Սան Ստեֆանոյի 16-րդ հողվածի շնոր-
հիվ տրված արտոնության միջոցով այժմ զբաղվում է խաղաղ աշխատանքով: Ազատու-
թյուն է ստացել Դիմբուլիների ամրոցում գերված նրա կինը՝ ամրոցի աղջիկ Ասլի: Այժմ
նա մի շինական խաղաղ գերդաստանի ժրաջան տանտիկինն է:

Հաղթակում ապրում է որսորդ Ավոն: Նա իր գնած հողատարածությունը դրել է գյու-
ղական համայնքի տրամադրության տակ և ինքը դարձել այդ համայնքի համեստ անդամ-
ներից մեկը: Նրա փեսան՝ Ֆարհադը, ձիաբուծական ֆերմա ունի. իր կնոջ՝ Մարոյի հետ
ապրում է խաղաղ ու բարեկեցիկ կյանքով: Արյունոտ Հաղթակը դարձել է խաղաղ ու
բախտավոր մի երկիր, ուր շինականի թե՛ կայքը, թե՛ կյանքը ապահովվում էր, հասկանա-
լի է, վարչական ինքնավարության շնորհիվ:

Վան քաղաքում խոջա Թորոսի հին կրպակը դարձել է եվրոպական տիպի առևտրա-

⁶ Շիրվանգադեն, Երկրի ժողովածու, հ. VIII, Ե., 1961, էջ 474-475:

կամ տուն, զարգացել է տեղական մանուֆակտուրային արդյունաբերությունը: Բերզեմ օղիին դարձել է շոգեմավային ընկերության անդամ և զբաղվում է բեռնափոխադրությամբ:

Վերացել է երկյուղն ու ազգամիջյան թշնամանքը: Հայերն ու քրդերը դարձել են լավ դրացիներ, քուրդ Աղասի բեկը հյուր է լինում Կարոյի տանը, մահմեդականները քրիստոնյաներին հանդիպելիս մի քանի քայլ հեռվից հարգալից ողջունում են միմյանց: Վերացել է մախկիմում եղած ատելությունը, թալանն ու ավարառությունը: Վանում փաշայի պալատի մեջ նստած է քրիստոնյա մահաճգապետ և այլն:

Այս Էպիլոզի վերջին՝ Ե գլուխը մկիրված է Համրին: Հայտնի է, որ Րաֆֆին Համրի կերպարի ներքո նկատի է ունեցել Միքայել Նալբանդյանին: Քանի որ «Կայծերի վերջը» կցորդում, թերևս նաև «Կայծեր» վեպի այդ տարբերակի մեջ գործողության զարգացումն ընթանում էր վերևից տրված ազատության պայմաններում, վարչական ինքնավարության կողմից, և ապա քանի որ այնտեղ՝ Վանի փաշայի պալատում նստած էր քրիստոնյա մահաճգապետ, հասկանալի է, որ այս հայեցակարգի ենթատեքստում Համրի՝ Միքայել Նալբանդյանի մասնակցությունը վեպի գործողությունների ոլորտում կարող էր ներհակ իրավիճակ ստեղծել, ուստի Րաֆֆին մտածված կերպով Համրին դուրս է հանել կենդանի մարդկանց միջավայրից և հանդես է բերում մահացած վիճակում: «Կայծերի վերջում» Ասլանն ու Ֆարհադը որպես հարգանքի տուրք այցելության են գալիս նրա շիրմին:

Պետք է ենթադրել, որ այդ բոլոր դրվագների վիպականացված նկարագրությունը ռաֆֆիական պատկերավորման միջոցով իրենց արտացոլումներն են ունեցել նաև «Կայծեր»-ի մեզ չհասած տարբերակի ձեռագրում: Մյուս կողմից, պետք է ենթադրել, որ այս վերջերգի գոյությունը հաջողությամբ փաստական է դարձնում նաև վեպի գրված և ավարտված լինելը: Այսուհանդերձ, պետք է խոստովանել, որ վեպի այդ տարբերակի մասին, Էպիլոզից բացի, ուրիշ ոչինչ չի հասել մեզ, բացի նրանից, որ, ըստ հեղինակի հավաստիացման, վեպը «սկսվել ու ավարտվել է Ասլանով»:

Սան Ստեֆանոյի դաշնագրի կնքումից ընդամենը մի քանի շաբաթ անց քրդերի ապստակություններն ու ավարառությունները Արևմտյան Հայաստանի այլևայլ վայրերում, ցույց տվեցին, թե կյանքի ու կայքի ապահովության ինչպիսի երաշխիքներ կարող էր ստեղծել այդ դաշնագրի 16-րդ հոդվածը:

Ազուլիսում գտնվող Րաֆֆին այս դեպքերից հետո շտապում է ավարտին հասցնել «Ջալալեդդին» վիպակի գրությունը՝ ասելու համար, որ Սան Ստեֆանոյում ստորագրված պայմանագիրը չի կարող Հաղբակի ու Ալաշկերտի, Վանի ու Մուշի հայության համար ապահովության կայուն երաշխիքներ ստեղծել, եթե արևմտահայությունը չկարողանա զենքը ձեռքին դիմակայել իր աշխատանքի վաստակը հափշտակողներին:

Այս վիպակի հրատարակման միջոցով Րաֆֆին ընդգծում էր անձնապաշտպանության կիրառման անհրաժեշտությունը նույնիսկ 16-րդ հոդվածի իրականացման պայմաններում: Արևմտահայության կյանքում անձնապաշտպանության կարևորության բացահայտումը, իհարկե, Րաֆֆոյի հղացումն ու մեմաշնորհը չէր, սակայն վիպական գործողության միջոցով այդ պայքարի ընթացքի վրա ազդելու, այն բորբոքելու հարցում Րաֆֆոյն ունեցած դերը տվյալ ժամանակահատվածում և՛ կարևոր էր, և՛ բացառիկ ու անհրաժեշտ: Պետք է ընդգծել, որ Սան Ստեֆանոյի դաշնագրից հետո Արևմտյան Հայաստանում

ստեղծված իրավիճակի պայմաններում Բաֆֆու կողմից «Ջալալեդդին» վիպակի հրատարակությունը ո՛չ միայն ժամանակին էր, այլև խիստ կարևոր ու նաև տրամաբանված:

Սան Ստեֆանոյի դաշնագրի կնքումից հարյուր մեկ օր հետո, 1878 թվականի հունիսի 1-ին, Գերմանիայի կանցլեր Բիսմարկի նախագահությամբ տեղի է ունենում Բեռլինի միջազգային կոնգրեսի բացումը:

Շուրջ մեկամսյա գործունեության ընթացքում Բեռլինի կոնգրեսում քննարկվում է Սան Ստեֆանոյում կնքված հաշտության պայմանագիրը և ի վնաս հայ ժողովրդի, հուլիսի 1-ին, 16-րդ հոդվածը փոխարինվում 61-ով:

«Բարձրագույն դուռը,- ասված է 61-րդ հոդվածում,- պարտավորվում է առանց ուշացման, հայկական մարզերում գործադրել տեղական պահանջներից բխող բարեկարգություններ ու ռեֆորմներ և ապահովել հայերի անվտանգությունը չեղքեզներից ու քրդերից: Այդ նպատակի համար ձեռք առնված միջոցառումների մասին նա պետք է պարբերաբար հաղորդի այն պետություններին, որոնք պիտի հսկեն նրա գործադրման վրա»⁷:

Կոնգրեսի կազմակերպման ենթատեքստային նպատակադրումն այն էր, որ առոչինչ դարձվեն Սան Ստեֆանոյում Ռուսաստանի կնքած պայմանագրի միջոցով Թուրքիայի տարածքում գրաված, ապա նաև օրինականացված նվաճումները:

Բեռլինի վեհաժողովում ստեղծված կացությունից օգտվելու նպատակով Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանում և Թուրքիայի հայոց Ազգային ժողովում նախօրոք քննարկման են ենթարկում Սան Ստեֆանոյում կնքված պայմանագրի դրույթները և ժողովի որոշումով կազմում մի պատվիրակություն՝ Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ, և ուղարկում Բեռլին՝ կոնգրեսին ներկայացնելու հայության կողմից ակնկալվող ինքնավարության ծրագիրը:

Բեռլինում Խրիմյանի գլխավորած պատվիրակությանը ոչ միայն թույլ չեն տալիս մասնակցելու վեհաժողովի նիստերին, այլև երկար ժամանակ նրանց չի հաջողվում Պատրիարքի խնդրագիրը՝ Հայաստանի ինքնավարության ծրագրի նախագիծը և Հայաստանի քարտեզը ներկայացնել կոնգրեսի նախագահին:

Դեպքերի զարգացմանը քայլ առ քայլ հետևող Բաֆֆին տեսնում էր, որ վեհաժողովում շուրջվող դատարկ խոստումներից բացի կար նաև դաժան իրականություն, որի մեջ մեկը մյուսի ետևից փշրվում էին հայության հույսերը:

Սան Ստեֆանոյի դաշնագրից անցել էր զգալի ժամանակ, ընթացքի մեջ էր Բեռլինի կոնգրեսը, սակայն Հայաստանի տարբեր վայրերում քրդերը դեռևս առաջվա մասն և ավելի համարձակ շարունակում էին ասպատակել անպաշտպան հայությանը:

Բաֆֆին դառնությամբ էր լսում այդ բոլորը: Այն, ինչ հիացմունք էր պատճառում միամիտներին, չէր կարող մոլորեցնել դեպքերի ընթացքը խորապես գիտակցող գրողին:

Այն պահին, երբ կոնգրեսում շարունակվում էր «Հայ ժողովրդի դատի պաշտպանությունը» վերնագիրը կրող քննարկումը, երբ անդամահատվում էր Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, Բաֆֆին իսպանական հայտնի երգիծաբան Մարիոնո Խոսե դե Լարրայի հոդվածի հիման վրա տպագրում է «Բառեր» վերնագրով պամֆլետը «Մշակ»-ի 1878 թվականի հունիսի 22-ի համարում, ուր ասում է, թե ամեն տեղ լսվում են «խոսքեր, բառեր, աղմուկ,

⁷ Լեո, Հայկական հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 110:

խառնաշփոթություն»։ Րաֆֆին տեսնում էր, որ եվրոպական պետությունների համար հայոց հարցը դարձել է սեփական շահերի հետապնդման միջոց։

Մշտապես իր ժողովրդի ճակատագրով ապրող, նրա ազատությունը երազող Րաֆֆին չէր կարող անտարբեր դիտել, թե ինչպես արևմտյան դիվանագիտությունն աճուրդի է դրել մի ամբողջ ժողովրդի գոյության հարցը։ Այդ օրերին գործող Բեռլինի Վեհաժողովը բոլորի համար հասկանալի դարձրեց, թե որքան ճիշտ էր Րաֆֆու կանխատեսումը, թե ինչպես Վեհաժողովից հայ ժողովուրդը շահեց միայն «բառեր»⁸։

Հայոց պատվիրակությունը կոնգրես էր գնացել չափազանց համեստ պահանջներով. «Մենք քաղաքական ազատություն չէ, որ պահանջում ենք, և ո՛չ էլ երբեք ուզում ենք բաժանվել թուրքական կառավարությունից։ Մենք ուզում ենք Թուրքական Հայաստանի մի բաժնում, այն է՝ Էրզրումի ու Վանի վիլայեթներում և Դիարբեքիի վիլայեթի հյուսիսային մասում, ուր թվական առավելություն ունենք թուրքերի վրա, ինչպես ցույց են տալիս ներկայացված վիճակագրական վավերագրերը, ահա այս բաժնում, կրկնում ենք, ուզում ենք ունենալ մի հայ վալի, որ պետությունների հովանավորությամբ կարգվի Բ. Դոնից»⁹։

Հարկ ենք համարում մեղ, որ «Խնդրագրում» եղած այս «մի հայ վալի» ունենալու պահանջը և վերը Գ. Արծրունու հողվածում «քրիստոնյա մահանգապետի» մասին եղած առաջարկը, թելադրանք են դառնում Րաֆֆու համար, որպեսզի նա իր «Կայծերի վերջը» էպիլոգում գրի, որ «Փառչալի պալատի մեջ նստած էր մի քրիստոնյա մահանգապետ»¹⁰։

Ինչպես տեսանք, պատվիրակության խնդրանքն էր ոչ թե անկախություն, այլ քրիստոնյա մահանգապետ թուրքական կառավարության հովանավորության ներքո, և այսուհանդերձ նրանց այդ համեստ ցանկությունը մնում է անկատար և հայ ժողովուրդը՝ իր պահանջած ինքնավարության փոխարեն Բեռլինի կոնգրեսից որպես վարձք ստանում է բարենորոգումների մասին ոչինչ չասող 61-րդ հոդվածը։

Հայ պատվիրակությունը պիտի վերադառնար՝ իր հետ տանելով «հայության դատը»։ Այդ օրերին Եվրոպայի կենտրոնում հնչում է արևմտահայության արդեն ուշացած ձայնը. «Հայ ժողովուրդը երբեք չպիտի դադարի աղմուկ հանել, մինչև որ Եվրոպան նրա պահանջներին զոհացում չտա»¹¹։

Արցունքն աչքերին եվրոպական դիվանագիտությունից գթություն խնդրող Խրիմյանը Բեռլինից իր հետ Պոլիս է բերում «Երկաթե շերեփի» պատմությունը և «Իրավունքը ուժովին է» կարգախոսը՝ խորհրդանշելով ինքնավարություն ձեռք բերելու հարցում պայքարի անհրաժեշտությունը։ «Գնա,- ասում է կոնգրեսի պահակը թղթի կտորը ձեռքին ախ քաշող Խրիմյանին,- մեյն ալ եթե հերիսա բաժնվի, պատրաստ կեցիր, երկաթե շերեփը չմոռնաս»։

Կոնգրեսի պահակը նման խոսք ասել է, թե ոչ, դա այնքան էլ էական չէ, սովյալ դեպքում ո՛չ այնքան կարևոր է փաստը, որքան դրան ծնունդ տվող շարժառիթը, երբ Բեռլինի կոնգրեսից հետո տիրապետում էր պատենի առիթը բաց թողնելու ափսոսանքը և պայքա-

⁸ Ցավոք սրտի Րաֆֆու այս սրնդձագործությունը դուրս է մնացել նրա «Երկրի ժողովածուի» ակադեմիական հրատարակության 12-րդ հավորից։

⁹ Մարտիան, Նայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 418-419։

¹⁰ Րաֆֆի, Կայծերի վերջը, Թ., 1890, էջ 31։

¹¹ Մարտիան, Նայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 479։

որ վերսկսելու անհրաժեշտության գաղափարը:

Բեռլինից վերադարձող և Վեհաժողովի որոշումից դժգոհ Խրիմյանը սուլթանի պալատին մոտ Օրթագյուղի Գումգափու եկեղեցում տալիս է մի քանի ռազմաշունչ քարոզներ. «Հայաստանցիներ,- ասում է նա,- այսուհետև սիրեցեք երկաթը, ձեր փրկությունը երկաթով կլինի, այն պատվական երկաթով, որ Զեյթունի լեռներն կելնե: Կհասկանա՞ք ինչ կուզես ասել, այդ երկաթով ամեն բան կշինվի, խոփ, մանգաղ, սուր, հրացան և այլն: Զենք գործածել սիրեցեք...»:

Հայկական հարցի Ապատամբ եվրոպական դիվանագիտության կողմից ցուցաբերած վերաբերմունքից դժգոհ էր ու հիասթափված նաև Ներսես Վարժապետյանը, սակայն, դիրքի բերումով, նա ստիպված էր ավելի զուսպ արտահայտվել, քան այդ իրեն թույլ էր տալիս Մկրտիչ Խրիմյանը:

Ազգային ժողովի հուլիսի 21-ի Ախտում Ներսես Պատրիարք Վարժապետյանը այսպես է փորձում բնութագրել իր գործունեությունը. «Եթե չես կրճա ընել ինչ որ կուզես,- ասում է նա,- պետք է ընես ինչ որ կրճաս»:

Թուրքիայի վրա ճնշում գործադրելու Ապատակով անգլիական դիվանագիտությունը Կ. Պոլսի իր դեսպանի միջոցով Աերկայացնում է Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու կեղծված մի ծրագիր: Հետևաբար որքան սուր կերպով է դրվում այդ հարցը, նույնքան ակնառու է դառնում Բեռլինի կոնգրեսում Աերկայացված ծրագրերի թերությունները և նույնքան էլ հրատապ՝ այն շտկելու և լրացնելու անհրաժեշտությունը: Բարենորոգումների ծրագրի սահմաններն ու բնույթը դառնում է օրվա ամենակարևոր մտահոգության առարկան, ուստի Բաֆֆին իր պարտքն է համարում անդրադառնալ այդ հարցին և «Մշակ»-ի 162 և 163-րդ համարներում տպագրում է «Ի՞նչ վերանորոգումներ պետք են Տաճկական Հայաստանին» վերնագրով հոդվածը: Հույսը չկորցրած Բաֆֆին այստեղ դնում է մի շարք հարցեր, որոնք պետք է դառնային բարենորոգումների համար ծրագրային առաջադրանքներ:

Հոդվածում նա կենտրոնական տեղ է հատկացնում հայ գյուղացուն հողով ապահովելու խնդրին: Նա պահանջում է վերացնել հողի պետական կալվածատիրական օրենքը, այն տալ օրինական տիրոջը՝ գյուղացուն, և ապահովել նրա բոլոր տեսակի արտոնություններն այդ հողի վրա¹²: Բաֆֆին այնուհետև պահանջում է շարիաթի միակողմանի օրենքի փոխարեն երկրի բոլոր բնակիչների համար առանց խտրության, նույնիսկ քաղաքացիության իրավունք: Ավազակային հարձակումներից ժողովրդին զերծ պահելու, նրանց կյանքի ու կայքի ապահովությունն իրականացնելու համար Բաֆֆին առաջարկում է Զինվորական տուրքի հաշվին պահել հայկական միլիցիա՝ երկրապահ բանակ, ստեղծել հարկերը գանձող ազգային հիմնարկություն և այլն:

Եթե «Տեղեկագիր գավառական հարստահարության» վերնագիրը կրող հոդվածում նա ծաղրում է Թուրքիայի շնորհած Ազգային սահմանադրությունը, ապա այստեղ կոչ է անում ընդարձակել «Ազգային սահմանադրության» սահմանափակ շրջանակը և այն տարածել բոլոր հայաբնակ գավառների վրա: Այս դեպքում կարծես թե Բաֆֆին հակասում է

¹² Նրա այս առաջարկը, որպես նպարակարոմ, րեն է գրել «Կայծերի վերջը» էպիլոգում, որտեղ Ռոստոյ Ավոն ոչ միայն հողարևը է, այլև «իր ունեցած վարածքը» դրել է համայնքի փրկապետության րակ:

ինքն իրեն, սակայն այդ հակասությունը արդյունք էր իրականում գոյություն ունեցող ռեալ հակասությունների ու հակադրությունների:

Ըստ Բեռլինում ստորագրված պարտավորագրի՝ մինչև 1878 թվականի սեպտեմբերի վերջը Ռուսաստանը պարտավոր էր իր զորքերը դուրս բերել Էրզրումից, Բայազետից ու Ալաշկերտի հովտից: Տասնամյակներ շարունակ Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել ցանկացող հայությունը թվում է, թե հասել էր իր նպատակների իրականացմանը, երբ զորքերի դուրս բերումը գործնականում փշրում էր նրանց բոլոր տեսակի պատրանքները: Խուճապի են մատնվում ոչ միայն Էրզրումի, Ալաշկերտի ու Բայազետի, այլև Վանի, Երզրնկայի, Մուշի ու Խնուսի հայ բնակիչները:

Նախապատրաստվող գաղթը կանխելու նպատակով Կ. Պոլսի Պատրիարքարանից Արևմտյան Հայաստան են մեկնում Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանը, Վահան և Արիստակես վարդապետները: Թիֆլիսից «Մշակ» լրագրի հանձնարարականով Կարս ու Էրզրում է մեկնում նաև Րաֆֆին: Տազմապը իրոք որ մեծ էր, զանգվածային գաղթը սպառնում էր Արևմտյան Հայաստանի հայաթափմանը:

Կովկասյան բանակի հրամանատար Լազարևը գաղթականությունը կանխելու նպատակով շրջանային կառավարիչներին հղած հրահանգում, որում ասում է. «Արգելեցեք հայերին գաղթել տաճկաց հողից մեր սահմանները և եթե նոքա չհնազանդվեն ձեզ և ինքնազույս շարժվեն, լիազոր իրավունք եմ տալիս բռնությամբ պահել նոցա, իսկ եթե այնուհետև ևս փորձեն անցնել, այն ժամանակ, ուր վրա հասաք՝ կանգնեցրեք նոցա...»¹³:

Րաֆֆին, հասարակական-քաղաքական գործչի խորաթափանցությամբ, տեսնում էր արևմտահայության առջև բացված վիճը, դրա վտանգավորությունը և ազգային միասնության կոչ անում: 1878 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսին գրողը Ազուլիսից «Մշակ»-ի խմբագրությանն է ուղարկում «Մարդը գոյության կովի մեջ» խորագիրը կրող ուսումնասիրությունը: Փոքր-ինչ ուշ գրած նամակում Րաֆֆին բացատրում է, թե ինչ վիճակ է սպասում արևմտահայությանը. «... Թուրքիայի այժմյան քաղաքականության փոփոխությունից հետո, և թե մրցության մեջ նրանք ինչ դեր կարող են խաղալ անգլիացիների հետ զարկվելով, և որ ամենազլխավորն է, ի՞նչ զենքեր, ի՞նչ պատրաստություն պիտի ունենա Թուրքիայի հայը, որ չընկնի գոյության կովի մեջ»¹⁴:

Բազմակողմանիորեն քննելով գոյության կովի հարցը՝ Րաֆֆին եզրահանգում է, որ կյանքում «անխիղճ անգութք, իր շահերի համար ուրիշին խեղդող, միշտ առաջ է գնում և հաղթող է հանդիսանում»: Իսկ եթե մի ազգ կամ անհատ ցանկանում է չոչնչանալ գոյության կովի մեջ, ապա, ըստ Րաֆֆու, նա պետք է «իր գործունեության ձևերը փոփոխե ժամանակի և հանգամանքների համեմատ»: Գոյության կովում չոչնչանալու և հարատևելու համար, որպես պայման, Րաֆֆին առաջարկում է «Մանաչել ժամանակի պահանջները» և «ժամանակի քաղաքակրթությանը համեմատ լինել զարգացած»¹⁵:

Բեռլինի կոնգրեսից հետո, ինչպես տեսանք, հայ ժողովուրդը ապրում է խորը հիասթափություն: Մտավորականության առաջավոր թևը սկսում է մեծ նշանակություն տալ սե-

¹³ «Մշակ», 1878, No 170, 5 հոկտեմբերի:

¹⁴ Մշակ», 1878, No 189, հ. XI, Ե., 1991, էջ 96:

¹⁵ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. XI, Ե., 1991, էջ 96:

փական ուժերի միավորման ու համախմբման գաղափարին, որոնում սթափվելու միջոցներ և բազմակողմանի առնչությունների մեջ սկսում քննել ինչպես իրենց հայցած վարչական ինքնավարությունից զրկվելու պատճառները, այնպես էլ ձգտում նախապատրաստված դիմակայել սպասվող իրադարձություններին: Որքան խորն էր գիտակցվում պայքարի պատեհ պահը կորցնելու պատճառները, այնքան ավելի ծավալում տեսք են ընդունում մի նոր ապագայի համար ձեռնարկվող գործողությունները, և այնքան ավելի արմատական հիմքի վրա է դրվում ապագայում նախապատրաստված լինելու գործը:

Այս նպատակադրումն իրականացնելու հիման վրա, Բեռլինի կոնգրեսի պատճառած հիասթափությունից հետո, Րաֆֆին նոր իմաստավորում է հաղորդում իր ինչպես հասարակական ու քաղաքական գործունեությանը, այնպես էլ գեղարվեստական ստեղծագործությունների ու հրապարակախոսական հոդվածների ներքին բովանդակությանը:

Րաֆֆի ստեղծագործողի արժանիքներից մեկն էլ այն էր, որ նա կարողանում էր ոչ միայն համաբայլ ընթանալ ժամանակի առաջադրած հասարակական-քաղաքական նոր խնդիրներին, այլև ինքն էր կատարում նորանոր հարցադրումներ և աշխատում արդյունավետ ուղու վրա դնել և գրականության միջոցով ընթացք տալ իր առաջադրած տեսակետներին, որի արտահայտությունը պետք է համարել նաև նրա «Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» խորագրով հոդվածը և «Կայծեր» վեպի մեջ նրա կատարելիք նոր և արմատական փոփոխությունները: Ելակետ դարձնելով այս հոդվածում բարձրացված դրույթները՝ Րաֆֆին վերանշակման է ենթարկում «Կայծերը»: Նա վեպի նախնական տարբերակից դուրս է թողնում այն գործողություններն ու դրվագները, որոնք այս կամ այն չափով կապված էին դիվանագիտական ճանապարհով ձեռք բերվելիք վարչական ինքնավարության հետ: Հանում է նաև այդ գաղափարի գովքն ու հետևանքը հանդիսացող «Կայծերի վերջը» վերնագրով էպիլոգը՝ Վանի փաշայի պալատում նստած քրիստոնյա նահանգապետի մասին հատվածի հետ միասին: Ելակետ դարձնելով անընդհատ նախապատրաստվելու ծրագիրը՝ Րաֆֆին ձեռնարկում է «Կայծեր»-ի վերանշակման աշխատանքը և որոշում գեղարվեստական լայնակտավ ստեղծագործության միջոցով տալ ամենքին զբաղեցնող «Ինչ անել» հարցի պատասխանը:

Բազմակողմանիորեն ուսումնասիրած լինելով արևմտահայության կյանքի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու հոգեբանական «հիվանդություններն իր բոլոր փտեցնող, օրըստօրե լուծարող և քայքայող կողմերով», Րաֆֆին «Կայծեր»-ի այս նոր տարբերակի մեջ, իր իսկ բնորոշմամբ, «ցույց է տալիս այն դարմանները, որոնցով պետք է բժշկել հիվանդին: Այդ դարմանները գուցե շուտով չեն օգնի, գուցե առաջին անգամ բոլորովին անհաջող կանցնեն, բայց դրանով պետք չէ հուսահատվել... Դարավոր հիվանդությունը մի ժողովրդի կյանքի մեջ երկարատև բժշկության պետք ունի... Դարմանները փորձված են: Այդ հիվանդությունն ունեցող ժողովուրդները միշտ դիմել են այդ դարմաններին»:

Ստեղծված նոր իրավիճակում Րաֆֆու համար այլևս պարզ էր, որ հայ ժողովրդի կյանքում տեղի է ունեցել ճակատագրականը՝ ձեռքից բաց է թողնվել Ռուս-թուրքական պատերազմից օգտվելու պատեհությունը, սակայն նա կատարված իրողությանը նայում է որպես հեռատես քաղաքական գործիչ, ուստի «Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ» վերնագրված հոդվածում Րաֆֆին այն տեսակետն է զարգացնում, որ անհաջողությո-

յունը մի ժողովրդի կյանքում ունի մաս իր օգուտները, որ նրան զգալ է տալիս իր թերութիւնները և մատնանշում դրանց վերացման ուղիները:

Ծաղրելով Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի մեջ ոսկու հանք որոնողներին՝ Րաֆֆին շարունակում է. «Մենք մեկ հանք ենք ճանաչում, որից կարելի է ստանալ ցանկացած ոսկին, եթե այդ հանքն անդադար և անընդհատ կերպով կքովագործվեր, դա կոչվում է անխապատրաստություն: Եվ Տաճկաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև անդադար և անընդհատ անխապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ ու պատրաստ հանդիպեն այն մեծ օրվան, երբ կրկին անգամ կզարկե ազատության ժամը: Իսկ այդ օրը կկրկնվի և շատ անգամ կկրկնվի...» (ընդգծումը - Խ. Ս.):

Ժողովրդին նոր ապագայի համար անխապատրաստելու ծրագրային խնդիրը Րաֆֆի վիպասան ու հասարակական-քաղաքական գործչի համար դառնում է ստեղծագործական մտասևեռում, և նա այդ ոգով ընթացք է տալիս նաև «Կայծեր»-ի նոր տարբերակի վերանայման աշխատանքներին:

Րաֆֆին նախ մերժելի է համարում 1878 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում գրած «Կայծերի վերջը» խորագրով էպիլոգը, Վանում փաշայի պալատում նստած քրիստոնյա նահանգապետի հետ միասին և ապա գալով ոչ ցանկալի հետևության, վերըստին դառնում է բալկանյան ժողովուրդների, հատկապես բուլղարների կիրառած փորձի ընդհանրացման գաղափարին և շարունակելով խորացնում է նրանց կիրառած փորձի տեղայնացումը հայկական միջավայրում, վեպը մաքրում է բոլոր այն հավելվածներից, որոնք թեմատիկ առումով ինչ-որ չափով կարող էին առնչված լինել 16 և 61-րդ հոդվածներում արծարծված հարցադրումների հետ:

Այս նույն առիթով Րաֆֆին դիմում է նաև մի այլ ծայրահեղ թվացող քայլի...

Վեպի «Աստղաբեր» գլխում Ֆարհադի հետ տեղի ունեցած խոսակցության ընթացքում Ասլանը կատարում է ուշադրության արժանի մի ընդհանրացում. «... Եթե մեր բարեկամները, - ասում է նա, - իրենց գործունեության մեջ որևէ սխալ են գործել, այդ առաջ է եկել նրանց մեջ՝ եռանդի չափազանցությունից և գիտության պակասությունից... նրանք իրենց ձգտումներին հասնելու չափ գիտություն չեն ունեցել... առանց հիմնավոր գիտության մարդը չէ կարող օգուտ բերել ո՛չ իր ազգին, ո՛չ իր հայրենիքին, ո՛չ մարդկությանը»¹⁶ (ընդգծումն իմն է - Խ. Ս.):

Քանի որ Րաֆֆին ցանկանում էր, որ հայ ժողովուրդը կարողանար բուլղարների օրինակով տեր կանգնել իր անկախությանը՝ իրականացնել անընդհատ անխապատրաստվելու ծրագիրը, ուստի «Կայծեր»-ի երկրորդ հատորում ժամանակի հայության հավաքական կերպար հանդիսացող Ֆարհադին դուրս է բերում նախկին միջավայրից և տանում Տարոն:

«Ֆարհադ, - ասում է Ասլանը նրան, - գիտությունը գլխավոր ուժն է, որ... տնօրինում է մարդու կայուն բարին, նրա երջանկությունը, նրա խաղաղությունը: Բայց դու ոչինչ գիտություն չունես... Քո մեջ պակասում է ամենահասարակ զարգացումն անգամ... եթե դու զարգանաս, կարող ես օգտակար մարդ լինել: Այսօր տանելու եմ քեզ մի վանք, այնտեղ

¹⁶ Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. VI, Ե., 1986, էջ 411:

կենդան է մի մարդ, մի ճշմարիտ գիտնական մարդ, քեզ հանձնելու եմ այդ մարդուն... Դու քո աչքով տեսար և տեղի վրա ծանոթացար մեր ժողովրդի դրության հետ: Նրա անցյալի և ներկայի հետ: Հայրենագիտությունը գլխավոր ուսմունքն է այն անձանց համար, որոնք նվիրվում են ծառայելու հայրենիքին: Ով որ հայրենիքը չի տեսել, չի ճանաչել և կամենում է նրա համար մի ծառայություն անել, նման է այն դերձակին, որ մարդուն չտեսած նրա համար հագուստ է ձևում, եթե դերձակը լավ արհեստավոր ևս լինի, բայց հագուստը կամ նեղ դուրս կգա, կամ լայն, կամ կարճ դուրս կգա, կամ՝ երկար: Մի խոսքով այլանդակ բան կլինի: Մի այդպիսի սխալի մեջ չընկնելու համար ես ցույց տվի քեզ մեր հայրենիքը. շատ երևույթների պատճառները բացատրեցի քեզ, շատ տեղերի և շատ ցեղերի հետ ծանոթացար դու»¹⁷:

Այնուհետև Ասլանը Ֆարհադին տանում է Տարոնի Առաքելոց վանք, նրա կրթությունը Համր անունով վանականին հանձնելու համար:

Ո՞վ էր Համր վանականը...

Րաֆֆին վեպի ընթերցողներին, թերևս գրաքննչական նկատառումներով, չի հայտնում նրա իսկական անուն-ազգանունը, սակայն, ինչպես վերը նշեցինք, Համրի ապրած կյանքի պատմության մանրամասների մեջ ճշմարտորեն ներկայացվում է Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության նկարագրությունը:

«Համր» վերնագիրը կրող ԼԲ (հմր. 32) գլխով ավարտվում է «Կայծեր» վեպի երկրորդ հատորի Րաֆֆու կողմից մշակված կանոնիկ բնագիրը, որը 1887 թվականին տպագրվում է Թիֆլիսում:

Քանի որ հանձին Համրի՝ Րաֆֆին նկատի է ունեցել Միքայել Նալբանդյանին, ապա դժվար չէ կոսհել, որ գրողը «Կայծեր»-ի վերջում ցանկացել է իրականացնել և ընթացք տալ այն մտայնությանը, որ իր ապագային տեղ դառնալու համար ժողովրդին անընդհատ մախապատրաստելու ծրագիրը պետք է իրականացվի Նալբանդյանի դավանած գաղափարական սկզբունքների հիման վրա, որի համար էլ նա վեպն ավարտում է այնպես, որ պայքարի մախապատրաստվող ժողովրդի հավաքական կերպար հանդիսացող Ֆարհադի դաստիարակությունը Ասլանը հանձնում է Միքայել Նալբանդյանին:

Ինչպես վերև ասվեց, Աննա Րաֆֆին ամուսնու արխիվում հայտնաբերում և 1890 թվականի ընթացքում հրատարակում է «Կայծերի» առաջին տարբերակի օրգանական շարունակությունը հանդիսացող և հետո Րաֆֆու կողմից վեպից դուրս թողնված «Կայծերի վերջը» խորագրով էպիլոգը, որից հետո 1904 թվականին Աննա Րաֆֆին այդ էպիլոգի տեքստում կատարում է մի քանի փոփոխություններ և «Կայծերի վերջը» ներկայացնում է իբրև հեղինակի կողմից «հարկադրաբար կատարված բացթողումներ» և ապա դարձնում է վեպի օրգանական շարունակությունը ու տեղադրում է Վիեննայում իր տպագրելիք «Կայծերի» երկրորդ հատորի վերջում:

Այդ ամենից հետո իր կատարածի հիմնավորումն արդարացնելու նկատառումով նա վեպի երկրորդ հատորի առաջաբանում այդ էպիլոգը հեղինակի կողմից դուրս թողնելը «հիմնավորում է» գրաքննչական նկատառումների հետ կապված բացատրությունով:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

Եվ այսպես. 1904 թվականին «Կայծերի» երկրորդ հատորը Վիեննայում լույս է տեսնում 27 էջ ծավալ ունեցող «Կայծերի վերջը» խորագիրը կող տեքստի կցորդումով:

1904 թվականից հետո Րաֆֆու «Կայծեր»-ի երկրորդ հատորը, մինչև այսօր, լույս է տեսել ևս վեց անգամ: Ցավալի է սակայն, որ հետագա բոլոր հրատարակիչները փոխանակ հենվելու Րաֆֆու կողմից 1887 թվականին տպագրած կանոնիկ բնագրի վրա, հավատացել են Աննա Րաֆֆու կողմից ներառված հավելումներին և այնուհետև «Կայծեր»-ի հետագա բոլոր վեց հրատարակությունները¹⁸ լույս են տեսել նրա կատարած այս փոփոխություններով:

1986 թվականին Րաֆֆու «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության վեցերորդ հատորը լույս ընծայելուց առաջ գիտակցվում է Աննա Րաֆֆու կատարածների ոչ գիտական լինելը և ակադեմիական հրատարակության թելադրանքով «Կայծերի վերջը» անջատվում է վեպի կանոնիկ բնագրից:

Ծանոթագրությունների մեջ ստեղծվում է Հավելված խորագրով բաժինը և որպեսզի հետազոտողների համար մատչելի դառնան «Կայծեր»-ի հետ կապված տարընթերցումները, նորից ակադեմիական հրատարակության թելադրանքով, այդ վերնագրի տակ զետեղվում են ո՛չ միայն «Կայծերի վերջը», այլև Րաֆֆու կողմից «Կայծեր»-ի առիթով, տարբեր ժամանակներում, կատարված բոլոր տեսակի գրառումները:

¹⁸ Աննա Րաֆֆու խնդարյուրած հավելումով Րաֆֆու «Կայծեր»-ի երկրորդ հատորը լույս է տեսել յոթ անգամ: